

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ

Նախաբան.

Հարկային և մաքսային համակարգերի կատարելագործման ու արդյունավետ գործարկման տեսանկյունից առանձնակի կարևորվում է հարկային ու մաքսային հարաբերություններ կարգավորող օրենսդրության, պետական եկամուտների քաղաքականության և վարչարարության շարունակական կատարելագործումը: Այս առումով, սույն ուղենիշային փաստաթղթով սահմանվում են այն հիմնական ուղղվարական սկզբունքները, որոնց հիման վրա միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում պետք է կատարվեն հարկային ու մաքսային օրենսդրության փոփոխությունները: Միաժամանակ, սույն փաստաթղթով նախանշվում են նշյալ օրենսդրական փոփոխությունների այն հիմնական ուղղությունները, որոնք ակնկալվում է իրականացնել ամենամոտ ապագայում՝ 2013-2014 թվականների ընթացքում:

Սույն ուղենիշային փաստաթուղթը մշակելու համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի թիվ 515-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հարկային օրենսդրության վերանայման 2012-2014 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1865-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին կից կոլեգիայի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի նիստում հաստատված՝ առաջիկա տարիների հարկային քաղաքականության հիմնական ուղղություններն ու դրանցից բխող միջոցառումների ժամանակացույցը, ինչպես նաև Արժույթի Միջազգային Հիմնադրամի հարկաբյուջետային հարցերի վարչության կողմից 2011 թվականին

կազմված՝ «Հարկային քաղաքականության բարեփոխումների շարունակումը Հայաստանում. հարկման ավելի պարզ, արդար և արդյունավետ համակարգի պլանավորումը» թեմայով զեկույցը:

Բացի այդ, սույն փաստաթղթի շրջանակներում հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքները մշակվել են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2012-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը՝ կարևորելով հատկապես նշյալ ծրագրի՝ պետական եկամուտների քաղաքականությանն առնչվող մասով ամրագրված՝ հետևյալ երկու կարևորագույն նպատակադրումները.

1) առաջիկա տասնամյակի ընթացքում ռեսուրսային շրջանակի ընդլայնման հիմնական աղբյուր պետք է հանդիսանան հարկային եկամուտները, իսկ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը մինչև 2025 թվականի ավարտը պետք է կազմի շուրջ 27-28 տոկոս,

2) հարկային և մաքսային վարչարարության բարելավումը պետք է դիտարկվի որպես գործարար և ներդրումային միջավայրի առաջիկա բարեփոխումների գերակայություն:

Միևնույն ժամանակ, հատկանշական է այն, որ հարկային եկամուտների աստիճանական աճի միջոցով ռեսուրսային շրջանակի ընդլայնման և գործարար միջավայրի բարելավման ու մրցունակության ապահովման նպատակները անխուսափելի հակադրություններ ունեն իրենց մեջ: Հետևաբար, եթե նույնիսկ հաշվի առնենք այն, որ վարչարարության բարեփոխումները կարող են իրականացվել առանց որևէ բացասական հետևանքի, ապա հարկման բազայի ընդլայնմանն ուղղված քաղաքականությունը չի կարող իր ոչ բարենպաստ ազդեցությունը չունենալ ներդրումների և տնտեսական գործունեության ընդլայնման վրա: Այս առումով, նպատակային պետք է համարվի հարկային եկամուտների՝ անհրաժեշտ մակարդակով աճը (ներառյալ հարկման բազայի ընդլայնման միջոցով), իսկ գործարար միջավայրի և հարկային համակարգի տարածաշրջանային մրցունակության հիմնախնդիրները պետք է դիտարկվեն որպես սահմանված նպատակին հասնելու սահմանափակումներ:

Այս առումով, սույն փաստաթղթով ներկայացված՝ հարկային ու մաքսային օրենսդրության փոփոխությունների հիմքում դրվող սկզբունքների և այդ փոփոխությունների ուղղությունների մշակման ժամանակ հաշվի է առնվել այն, որ՝

1) պետական եկամուտների քաղաքականության ու վարչարարության հիմքում դրվող սկզբունքները պետք է բխեն երկրում իրականացվող տնտեսական քաղաքականության ուղղվածությունից և հիմնված լինեն ազգային տնտեսության առանձնահատկությունների վրա,

2) հարկային ու մաքսային ոլորտներում պետական քաղաքականության մշակման ու վարչարարության իրականացման համատեքստում պետք է մշտապես ուշադրության կենտրոնում պահել կայուն և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման, ազգային տնտեսության համար գերակա համարվող ճյուղերի շարունակական զարգացման, ներդրումների խրախուսման, տնտեսության արտադրատեխնիկական հիմքի կատարելագործման ու նորացման, հասարակության տարբեր սոցիալական խմբերի եկամուտների արդարացի վերաբաշխման նպատակադրումները,

3) Հայաստանի Հանրապետությունում պետք է ձևավորել այնպիսի հարկային ու մաքսային համակարգեր, որոնք իրենց գրավչությամբ, կայունությամբ ու արդիականությամբ մրցունակ կլինեն առնվազն տարածաշրջանային համանման համակարգերի համեմատությամբ:

Հարկային օրենսդրության վերանայման հիմնական ռազմավարական սկզբունքները.

Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերություններ կարգավորող օրենսդրության վերանայումները միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում հիմնված են լինելու հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

1. Հարկային արտոնությունների կրճատում ու հարկման բազայի ամրապնդում (հարկման հորիզոնական արդարության սկզբունքի ամրապնդում).

Առաջիկա տարիներին հարկային քաղաքականության տեսանկյունից առանձնակի կարևորվելու է գործող հարկային արտոնությունների շրջանակի կրճատումը, հարկման

բազայի ընդլայնումը և ամրապնդումը, ինչը հնարավորություն կընձեռի աստիճանաբար բարելավել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը և ամրապնդել հարկման հորիզոնական արդարության սկզբունքը: Վերջինս նախատեսում է համանման տնտեսական պայմաններում գործող հարկ վճարողների նկատմամբ հարկման միևնույն կանոնների և կարգավորումների կիրառություն: Այս սկզբունքի նպատակը, ըստ էության, հարկման ոլորտում խտրականությունը նվազագույնի հասցնելը և պետական բյուջեի հարկային եկամուտների ցանկալի մակարդակի ապահովումն է:

Հարկային արտոնությունների կրճատումը, սակայն, դյուրին գործ չէ, քանի որ գործող արտոնությունների վերացումը կնշանակի կտրուկ փոփոխել այդ արտոնություններից օգտվողների ձեռնարկատիրական ու տնտեսական գործունեության պայմանները և ազգային տնտեսության ներդրումային միջավայրը ընդհանրապես: Այս առումով, հարկային արտոնությունների շրջանակի կրճատումը պետք է իրականացվի բավարար զգուշավորությամբ՝ խուսափելու համար հնարավոր ցնցումներից ու տնտեսության վրա բացասական հետևանքներից: Մասնավորապես, նախքան հարկային արտոնությունների կրճատումը պետք է մանրամասն ուսումնասիրվեն գործող հարկային արտոնությունների կիրառության բոլոր դրական ու բացասական կողմերը, այդ թվում՝ ինչպես պետության, այնպես էլ այդ արտոնություններից օգտվողների տեսանկյունից, համադրվեն արտոնությունների կիրառության օգուտներն ու վնասները, բացահայտվեն արտոնությունների վերացման հնարավոր ազդեցությունները պետական բյուջեի հարկային եկամուտների, ազգային տնտեսության տնտեսական ակտիվության, գործարար ու ներդրումային գրավչության, երկրի սոցիալ-տնտեսական վիճակի, տնտեսական մրցակցության, գնաճային ճնշումների և այլ կարևոր ցուցանիշների վրա: Այս առումով, եթե կատարվող ուսումնասիրությունների արդյունքներով հարկային արտոնությունների կրճատման նպատակահարմարությունը չհիմնավորվի, ապա Կառավարությունը գործող հարկային արտոնությունների կրճատման ուղղությամբ միջոցառումներ չի կատարելու:

Մյուս կողմից, շատ կարևոր է այն, որ արտոնությունների կրճատումը պետք է իրականացվի աստիճանաբար՝ սկզբնական փուլում կրճատելով այն արտոնությունները, որոնց կիրառության արդյունավետությունը առավել ցածր է գնահատվում և որոնց վերացումը

տնտեսավարող սուբյեկտների համար լուրջ տնտեսական հիմնախնդիրներ, իսկ հարկային մարմինների համար բարդ վարչարարական խնդիրներ չի առաջացնի:

Ընդհանուր առմամբ, գործող օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները կարելի է խմբավորել հետևյալ հիմնական խմբերում.

- 1) սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնություններ,
- 2) ոլորտային հարկային արտոնություններ,
- 3) գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու ակտիվության բարձրացմանն ուղղված հարկային արտոնություններ:

Սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների կիրառության հիմնական նպատակը առողջապահական, կրթական ու գիտական նշանակության որոշ ծառայությունների մատուցումն ու ապրանքների մատակարարումը ավելացված արժեքի հարկից ազատելն է, ինչը, այլ հավասար պայմաններում հնարավորություն է ընձեռում նշյալ ապրանքներն ու ծառայությունները ձեռք բերել համեմատաբար ցածր գներով:

Սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների կիրառության մյուս հիմնական նպատակը ֆիզիկական անձանց կողմից սոցիալական պաշտպանության նպատակներով ստացվող որոշ եկամուտներ եկամտային հարկով հարկումից ազատելն է:

Այս առումով, նախքան սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների կրճատումը պետք է մանրամասն ուսումնասիրվի դրանց կիրառության արդյունավետությունը՝ բացահայտելու համար այն արտոնությունները, որոնք չեն ապահովում անհրաժեշտ հասցեականություն: Այսինքն, սոցիալական ուղղվածություն ունեցող այն հարկային արտոնությունները, որոնց կիրառությամբ հնարավոր չի լինում աջակցություն ցուցաբերել հասարակության այն խմբերին, որոնց համար, ըստ էության, նախատեսված են այդ արտոնությունները, պետք է աստիճանաբար կրճատվեն, իսկ դրանց փոխարեն պետք է կիրառվեն պետական օժանդակության ուղղակի գործիքներ ու մեթոդներ, որոնք առավել հասցեական են և որոնց կիրառությունն առավել արդյունավետ է:

Միաժամանակ, հատկանշական է այն, որ սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների շրջանակի կրճատման հնարավորություններն ու նպատակահարմարությունը պետք է քննարկել հասարակության տարբեր սոցիալական խմբերի կող-

մից ստացվող եկամուտների ընդգծված անհավասարության աստիճանի կրճատման, հասարակության եկամուտների վերաբաշխման՝ պետության գործառույթի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև հասարակության թույլ ապահովված խմբերի սոցիալական պաշտպանության այլընտրանքային գործիքների (այդ թվում՝ նպատակային ու հասցեական սոցիալական ծրագրերի) ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքների համատեքստում: Հակառակ պարագայում, սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների կրճատումը կարող է նկատելի բացասական ազդեցություն ունենալ վճարունակության ու սոցիալական պաշտպանվածության ցածր աստիճան ունեցող բնակչության վրա:

Ոլորտային հարկային արտոնությունների կիրառությունը պայմանավորված է երկու հիմնական հանգամանքներով:

Ազգային տնտեսության երկարաժամկետ և կայուն զարգացման տեսանկյունից տնտեսության որոշ ոլորտների զարգացումը համարվում է գերակայություն: Դրանք հիմնականում այն ոլորտներն են, որոնք ավանդաբար ձևավորել են ազգային տնտեսության նկարագիրը (ուսկերչություն, զբոսաշրջություն, գորգագործություն և այլն): Այս առումով, Կառավարությունը տարբեր գործիքներով (այդ թվում՝ հարկային արտոնությունների կիրառությամբ) օժանդակում է այդ ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտներին: Այս խմբի ոլորտային արտոնությունների կիրառության նպատակահարմարությունը հիմնավորվում է նաև դրանց արդյունավետությամբ և նեղ շրջանակով, հետևաբար նշյալ արտոնությունների շարունակական կիրառությունը կարևորվում է նաև տնտեսության զարգացման ներկա փուլում:

Ոլորտային հարկային արտոնությունների կիրառության երկրորդ հիմնական պատճառն այն է, որ կան տնտեսության այնպիսի ոլորտներ, որտեղ արդյունավետ հարկային վարչարարության իրականացումը մշտապես դժվար լուծելի խնդիր է եղել հարկային մարմինների համար: Խոսքը գլխավորապես վերաբերում է տնտեսության գյուղատնտեսական ու ֆինանսական ոլորտներին:

Մասնավորապես, գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների շահութահարկով կամ եկամտային հարկով հարկումից ազատման արտոնության

վերացումը ներկա փուլում խնդրահարույց է հատկապես արդյունավետ հարկային վարչարարություն իրականացնելու կարողությունների տեսանկյունից: Խնդիրը, մասնավորապես, կայանում է նրանում, որ՝ ա. գործնականում բավական բարդ է գյուղատնտեսական արտադրանքի ապրանքային արտադրության մասի (իրացման համար նախատեսված մասի) առանձնացումը սեփական կարիքների համար արտադրվող գյուղատնտեսական արտադրանքից,

բ. գործող օրենսդրության համաձայն, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար ֆիզիկական անձանցից պետական հաշվառում չի պահանջվում, ինչը նշանակում է, որ գյուղատնտեսական գործունեության ոլորտում գործող ֆիզիկական անձինք ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար համապատասխան կարգավիճակ չունեն:

Այդ կապակցությամբ, նախքան գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների հարկման համակարգի ներդրումը անհրաժեշտ է միջացառումներ ձեռնարկել գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց հաշվառման ու ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար որոշակի կարգավիճակի տրամադրման ուղղությամբ: Այս առումով գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների հարկման խնդիրն Կառավարությունը կանդրադառնա այն ժամանակ, երբ գյուղատնտեսական արտադրանքի առավազն 70 տոկոսը կթողարկվի համապատասխան կարգավիճակ ունեցող սուբյեկտների կողմից:

Տնտեսության ֆինանսական ոլորտում մատուցվող ծառայությունների գերակշիռ մասն ավելացված արժեքի հարկից ազատելու արտոնությունը նույնպես պայմանավորված է եղել վարչարարական բարդություններով, քանի որ գործնականում բավական բարդ է այս ոլորտում ստեղծվող նոր արժեքի մեծության, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող բազայի որոշումը: Այդուհանդերձ Կառավարությունը առաջիկայում նախաձեռնելու է արտոնությունների շրջանակը որոշակիորեն կրճատելուն ուղղված քայլեր, ուսումնասիրելու է տնտեսության ֆինանսական հատվածում ստեղծվող ոչ տոկոսային որոշ եկամուտների՝ ավելացված արժեքի հարկով կամ մեկ այլ հարկատեսակով հարկման գործնական հնարավորությունները: Այս իմաստով, քննարկվելու է նաև որոշ երկրներում կիրառվող՝ ֆինանսական գործառնությունների հարկի ներդրման հնարավորության ու նպատա-

կահարմարության հարցը: Վերջինս ենթադրում է, որ տնտեսության ֆինանսական հատվածում ստեղծվող նոր արժեքը չափվում է վճարվող աշխատավարձերի ու ձևավորվող շահույթների հանրագումարով, որը հարկվում է որոշակի կոնկրետ տոկոսադրույքով: Միաժամանակ, տնտեսության ֆինանսական հատվածում ձևավորվող ոչ տոկոսային եկամուտների՝ ավելացված արժեքի հարկով կամ մեկ այլ հարկատեսակով հարկման նպատակահարմարությունը գնահատելիս պետք է ուսումնասիրվեն ինչպես տնտեսության ֆինանսական հատվածում գործող սուբյեկտների գործունեության շահութաբերության աստիճանը բնութագրող հիմնական ցուցանիշներն ու դրանց փոփոխության միտումները, այնպես էլ բանկային վարկերի տոկոսադրույքների հնարավոր բարձրացման հետևանքները:

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու ակտիվության բարձրացմանն ուղղված հարկային արտոնություններից հատկանշական է թերևս ռեզիդենտ կազմակերպությունների կողմից ստացվող շահաբաժինների՝ շահութահարկով հարկումից ազատման և ֆիզիկական անձանց կողմից ստացվող շահաբաժինների՝ եկամտային հարկով հարկումից ազատման արտոնությունը: Շահաբաժինների հարկումը համահունչ է հարկման հավասարության ու արդարության սկզբունքներին՝ հաշվի առնելով այն, որ շահաբաժինն իր տեսակով նույնպես պասիվ եկամուտ է, և եթե պասիվ եկամուտների մյուս տեսակները ենթակա են հարկման (օրինակ տոկոսները, վարձակալական վճարները), ապա շահաբաժինները նույնպես պետք է ենթակա լինեն հարկման: Այս առումով, Կառավարությունը առաջիկայում քայլեր կնախաձեռնի շահաբաժինների հարկման ուղղությամբ:

Ներդրումային ակտիվության բարձրացմանն ուղղված հարկային արտոնություններից հատկանշական է նաև գանձապետական պարտատոմսերից ֆիզիկական անձանց կողմից ստացվող տոկոսի կամ զեղչի՝ եկամտային հարկից ազատման արտոնությունը: Վերջինիս վերացումն, ընդհանուր առմամբ, համահունչ է հարկման արդարության սկզբունքին՝ հաշվի առնելով այն, որ մնացած բոլոր դեպքերում տոկոսների տեսքով ստացվող եկամուտները ենթակա են հարկման: Խնդիրը, սակայն, կայանում է նրանում, որ գանձապետական պարտատոմսերը կարող են շրջանառվել նաև արժեթղթերի երկրորդային շուկայում, ինչի արդյունքում դրանց գծով ստացվող տոկոսային եկամուտների հարկման խնդիրը վարչարարական առումով զգալիորեն բարդանում է: Մասնավորապես, խնդիրը կայանում է նրա-

նում, որ գործող օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց տոկոսային եկամուտները պետք է հարկվեն դրանք վճարողների՝ հարկային գործակալների կողմից: Տվյալ դեպքում, հարկային գործակալի գործառույթը պետք է իրականացնի պետությունը՝ գանձապետական համակարգի միջոցով: Արժեթուղթը տիրապետողին եկամուտներ վճարելիս, սակայն, գործնականում բավական դժվար է որոշել այդ եկամտի այն մասը, որը ձևավորվել է տվյալ անձի մոտ, քանի որ եկամտի մի մասը կարող է ձևավորված լինել նախորդ տիրապետողների մոտ և եկամտային հարկով հարկված չլինել: Այս առումով, նախքան գանձապետական պարտատոմսերից ֆիզիկական անձանց կողմից ստացվող տոկոսի կամ զեղչի՝ եկամտային հարկից ազատման արտոնության վերացումը պետք է աշխատանքներ կատարվեն այդ եկամուտների հարկման մեխանիզմների ձևավորման ուղղությամբ:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ Կառավարությունը 2013-2014 թվականների ընթացքում սույն փաստաթղթի թիվ 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան, հանդես է գալու որոշ հարկային արտոնությունների կրճատման նախաձեռնությամբ, իսկ միջնաժամկետ հեռանկարում քննարկելու է նաև այլ արտոնությունների կրճատման հնարավորության հարցը:

Վերոնշյալը նաև նշանակում է, որ առաջիկա տարիներին հարկային քաղաքականության հիմնական ուղղություններն են հանդիսանալու՝

ա. հարկային արտոնությունների շրջանակի կրճատումը. շեշտադրումը կատարվելու է հատկապես այն արտոնությունների կրճատման վրա, որոնց ազդեցությունը ազգային տնտեսության զարգացման տեսանկյունից գնահատվում է ցածր և որոնց կիրառության նպատակահարմարությունը չի հիմնավորվում «ծախսեր-օգուտներ» վերլուծությունների արդյունքներով: Այսինքն, բոլոր այն հարկային արտոնությունները, որոնց կիրառության արդյունքում սպառողների ու տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծվող «օգուտները» համարժեք չեն պետության կրած «ծախսերին» (պետության կորցրած հարկային եկամուտներին), պետք է աստիճանաբար կրճատվեն: Քաղաքականության այսպիսի մոտեցումը հիմնավորվում է ֆինանսական ռեսուրսներ կենտրոնացնելու՝ պետության սահմանափակ ներուժը առավել արդյունավետ և առավել հասցեական ձևով օգտագործելու նպատակադրումով, քանի որ հարկային արտոնությունների տրամադրմամբ, պետությունը, ըստ

էության, գրկվում է լրացուցիչ հարկային եկամուտներ հավաքագրելու և զարգացման ու սոցիալական ապահովության լրացուցիչ ծրագրեր իրականացնելու հնարավորություններին: Արդյունքում պետության կարևորագույն գործառնություններից մեկը՝ եկամուտների վերաբաշխման գործառնությամբ և հասցեական ձևով չի իրականացվում: Այս առումով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ է լինելու գործող հարկային արտոնությունների շրջանակի շարունակական կրճատմանը:

բ. հարկման բազայի առավելագույն ընդլայնումը. միջոցառումներ են ձեռնարկվելու տնտեսության տարբեր ոլորտների միջև հարկային բեռի անհամամասնությունների չեզոքացման, նոր հարկվող օբյեկտների սահմանման, ինչպես նաև առկա հարկման բազան առավել արդյունավետ ու լիարժեք ձևով հարկման ենթարկելու համար: Հարկման բազայի ընդլայնմանն ուղղված քաղաքականության այս ուղղության ներքո քննարկվելու է նաև դիզելային վառելիքի՝ ավելացված արժեքի հարկով հարկման հարցը, քանի որ հարկման արդարության ու վարչարարության արդյունավետության տեսանկյունից հիմնավոր չէ բենզինի ներմուծումն ու իրացումը ավելացված արժեքի հարկով հարկելու պարագայում դիզելային վառելիքի ներմուծումն ու իրացումը ավելացված արժեքի հարկից ազատելու արտոնության շարունակական կիրառությունը: Մյուս կողմից, հատկանշական է այն, որ դիզելային վառելիքի մասով ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառությունը շարունակելու անհրաժեշտությունը չի հիմնավորվում նաև դիզելային վառելիքի գները համեմատաբար ցածր մակարդակում պահելու նպատակադրման տեսանկյունից, քանի որ դիզելային վառելիքի մասով ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ արտոնության կիրառության գործոնով պայմանավորված՝ դիզելային վառելիքի գների բարձրացումը առանձնապես չի կանխարգելվել:

գ. նոր հարկային արտոնությունների՝ միայն բացառիկ դեպքերում տրամադրումը. առանձին հարկ վճարողներին կամ հարկ վճարողների առանձին խմբերին նոր հարկային արտոնություններ պետք է տրամադրվեն բացառիկ դեպքերում ելնելով երկրի ռազմավարական զարգացման նախապես սահմանված նպատակներից և ծրագրերից:

դ. հարկային արտոնությունների ժամանակային սահմանափակվածությունը. բացի այն, որ նոր հարկային արտոնություններ կարող են տրամադրվել միայն բացառիկ դեպքերում:

րում, հատկանշական է նաև այն, որ այդ արտոնությունները չպետք է լինեն անժամկետ: Այս առումով, նոր տրամադրվող հարկային արտոնությունները ժամանակավոր բնույթ են կրելու և ունենալու են կիրառության հստակ վերջնաժամկետներ:

2. Հարկման ուղղահայաց արդարության սկզբունքի ամրապնդում.

Այս սկզբունքի իրագործմամբ պետությանը հնարավորություն կընձեռվի՝ հավաքագրելու լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ՝ իր սոցիալական ծրագրերը հասարակության մեջ հարաբերականորեն բարձր եկամուտներ ստացող անձանց հաշվին իրագործելու և սոցիալական նշանակության այլ խնդիրներ լուծելու համար:

Հարկման ուղղահայաց արդարության սկզբունքի ամրապնդման հիմնական ուղղությունը լինելու է՝

ա. տեսանելի հարստության կամ շքեղության՝ առավել մեծ չափերով հարկումը.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է տեսանելի հարստության հարկումը: Ավելին, 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխություններով առաջին քայլը կատարվել է՝ շքեղ ավտոմեքենաները ներառվել են ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների խմբում: Այս առումով, հարկային քաղաքականության շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության հետագա գործողությունները միտված են լինելու գույքի՝ շքեղության չափանիշների սահմանմանը և այդ չափանիշներին համապատասխանող գույքային միավորների համար հարկերի բարձր դրույքաչափերի սահմանմանը:

Տեսանելի հարստության կամ շքեղության հարկման գործուն մեխանիզմի ստեղծման համար խիստ կարևորվում է անշարժ գույքի միավորների զանգվածային և պարբերաբար վերագնահատումների կատարման անհրաժեշտությունը՝ նպատակ ունենալով վերջիններիս կադաստրային արժեքները հնարավորին չափ մոտեցնել դրանց շուկայական գներին և դրանով իսկ ընդլայնել գույքային հարկերի հարկման բազան: Այդ նպատակով ներդրվելու է անշարժ գույքի միասնական հարկի համակարգը, ինչը նաև հնարավորություն կընձեռի բարձրարժեք գույքը հարկել ավելի պրոգրեսիվ դրույքաչափերով:

3. Գործարար միջավայրի բարելավում.

Հարկային օրենսդրության վերանայումները պետք է ուղղված լինեն նաև Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի հետագա բարելավմանը՝ որպես վերջին տարիներին այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների տրամաբանական շարունակություն: Քաղաքականության այս ուղղության հիմնական նպատակադրումը պետք է լինի առնվազն տարածաշրջանում մեր հարկային համակարգի մրցունակության ու գրավչության ապահովումը: Այս առումով, շատ կարևոր է, որպեսզի հարկային օրենսդրության առաջիկա փոփոխությունները միտված լինեն հարկ վճարողների համար անհարկի և տնտեսագիտական հիմնավորումներ չունեցող սահմանափակումների վերացմանը:

Այս սկզբունքի իրագործման հիմնական ուղղություններն են հանդիսանալու՝

ա. ԱԱՀ-ի հաշվարկներով առաջացող պայմանական գերավճարները (դեբետային մնացորդները) որոշակի ժամանակահատված հետո հարկ վճարողներին վերադարձնելու ընթացակարգերի սահմանումը. գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից խիստ կարևորվում է հարկային մարմիններին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկներով առաջացող դեբետային մնացորդները որոշակի պարբերականությամբ հարկ վճարողներին վերադարձնելու կամ այլ պարտավորությունների մարմանն ուղղելու ընթացակարգի ներդրումը: Ընդ որում, այս ուղղությամբ իրականացվող աշխատանքներում պետք է հաշվի առնել հարկ վճարողների ռիսկայնության աստիճանը և ավելի սահմանափակ պահանջներ ու պարզեցված ընթացակարգեր սահմանել կարգապահ և ոչ ռիսկային համարվող հարկ վճարողների համար: Հակառակ պարագայում հարկ վճարողները ոչ արդարացիորեն զրկվում են իրենց շրջանառու ֆինանսական միջոցներն արդյունավետ ձևով կառավարելու հնարավորությունից և փաստացի առանց տոկոսի «ֆինանսավորում են» պետությանը:

բ. ԱԱՀ-ի գծով պարտավորության հաշվարկման միասնական սկզբունքների ամրագրումը. գործող օրենսդրությունը ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու իրավունքի ձեռք բերման և ԱԱՀ-ի գծով պարտավորության առաջացման պահերի որոշման առումով նախատեսում է տարբեր կանոններ: Մասնավորապես, հարկ վճարողը ԱԱՀ-ի գծով հաշվանցման իրավունքը ստանում է ձեռք բերվող ապրանքի կամ ստացվող ծառայության դիմաց վճարելու հաշվետու ժամանակաշրջանում, մինչդեռ ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունը ծագում է անկախ իրացվող ապրանքի կամ մատուցվող ծառայության դիմաց վճարումը

ստանալու հանգամանքից: Առաջիկա օրենսդրական փոփոխությունների իրականացման շրջանակներում պետք է միասնականացվեն ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու իրավունքի ստացման և պարտավորության ծագման պահերի որոշման կանոնները: Հակառակ պարագայում ստացվում է, որ միատեսակ հարկային հարաբերությունները կարգավորվում են տրամագծորեն հակառակ մոտեցումներով, ինչի արդյունքում հարկ վճարողը զրկվում է իր տրամադրության տակ եղած շրջանառու ֆինանսական միջոցներն արդյունավետ ձևով կառավարելու հնարավորությունից:

գ. ներմուծման ժամանակ մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգման համակարգի կատարելագործումը. ներմուծման ժամանակ մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգման արտոնության կիրառությունը կարևոր ներդրում էր գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ, հետևաբար առաջիկայում հատուկ ուշադրություն պետք է հատկացվի այդ համակարգի հետագա կատարելագործման հնարավորությունների ուսումնասիրությանը:

դ. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի գանձումը մաքսային սահմանից փուլ առ փուլ դեպի հանրապետության ներքին տարածք տեղափոխելու հնարավորությունների ուսումնասիրությունը և գնահատումը. քաղաքականության մշակման ու իրականացման տեսանկյունից առաջիկա տարիներին կարևորվելու է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի գանձումը մաքսային սահմանից աստիճանաբար դեպի հանրապետության ներքին տարածք տեղափոխելու մոտեցումը: Խնդիրը, սակայն, կայանում է նրանում, որ քաղաքականության այդպիսի փոփոխությունը ենթադրում է մեծ ֆիսկալ ազդեցություն պետական բյուջեի հարկային եկամուտների վրա: Հետևաբար, նման համակարգային փոփոխություն կատարելու հնարավորություններն ու սահմանափակումները պետք է նախապես ուսումնասիրվեն և գնահատվեն:

4. Հարկման դրույքաչափերի օպտիմալացում.

Հարկման դրույքաչափերը պետք է սահմանվեն այնպես, որպեսզի՝

ա. դրանց գործողությունը ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ ունենա առավելագույն չեզոքություն և որպեսզի հարկային բեռը ընդունելի լինի ձեռնարկատիրական գործունեության շահութաբերության համատեքստում,

բ. դրանք հնարավորինս ներդաշնակ լինեն ԱՊՀ և այն երկրներում կիրառվող դրույքաչափերի հետ, որոնք, ըստ համապատասխան ոլորտների, հանդիսանում են Հայաստանի Հանրապետության մրցակիցներ: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության տնտեսության համար գերակա համարվող ոլորտների մասով հարկային քաղաքականության, այդ թվում՝ դրույքաչափերի համեմատականները պետք է կատարվեն այդ ոլորտների մասով աշխարհի առաջատար երկրների հետ: Բոլոր տիպի համադրություններում պետք է հաշվի առնվեն հարկման արդյունավետ դրույքաչափերը՝ հաշվարկված բոլոր տեսակի հարկային նվազեցումների և հարկման փաստացի կանոնների հիման վրա,

գ. այն ապրանքները, որոնց նկատմամբ պահանջարկի գնային ճկունությունը հարաբերականորեն ցածր է և որոնք չեն հանդիսանում առաջնային սպառման ապրանքներ (հիմնականում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ՝ ակոհոլային խմիչքներ, ծխախոտի արտադրանք), հարկվեն հարաբերականորեն ավելի բարձր դրույքաչափերով՝ հաշվի առնելով այն, որ հարկային գործոնով պայմանավորված՝ նշյալ ապրանքների գների հնարավոր բարձրացումը չի առաջացնի շուկայական իրադրության կտրուկ փոփոխություններ:

5. Հարկային վարչարարության պարզեցում և ընթացակարգերի կարարելագործում.

Այս սկզբունքի իրագործման հիմնական ուղղություններն են հանդիսանալու՝

ա. օրենսդրական դրույթների պարզեցումը, երկիմաստությունների ու անորոշությունների վերացումը. արդյունավետ հարկային վարչարարության իրականացման համար չափազանց կարևոր է օրենսդրության պարզությունը, միմյանց հակասող, տարրնթերցման հնարավորություններ պարունակող ու երկիմաստ մեկնաբանությունների պատճառ հանդիսացող դրույթների վերացումը՝ հաշվի առնելով այն, որ օրենսդրության բարդ ու ոչ հստակ

շարադրանքը ինքնին հանգեցնում է տարընկալումների ու տարընթերցումների: Արդյունքում բարդանում է ինչպես հարկ վճարողների կողմից իրականացվող հարկային հաշվառումը, այնպես էլ հարկային մարմինների կողմից իրականացվող հսկողական աշխատանքը: Այս իմաստով, հարկային օրենսդրության հետևողական կատարելագործումը եղել և առաջիկա տարիներին դեռ շարունակելու է համարվել օրենսդրական փոփոխությունների հիմնական նպատակադրումներից մեկը:

բ. հարկ վճարողների վարչարարական բեռը չավելացնող հարկման մեթոդների շարունակական կիրառումը (մեթոդներ, որոնք չեն ընդլայնում հարկային մարմինների հետ վիումները, չեն մեծացնում հարկային հաշվառման վրա ծախսվող ռեսուրսները և հարկային մարմնից պահանջում են նվազագույն ռեսուրսների ծախս). այս առումով, միջնաժամկետ հեռանկարում կշարունակվեն կիրառվել հարկման այնպիսի այլընտրանքային համակարգեր, ինչպիսիք են արտոնագրային վճարների ու շրջանառության հարկերի համակարգերը, իսկ փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների համար հարկման հարաբերականորեն պարզեցված ընթացակարգերի կիրառությունը և մեղմ հարկային վարչարարության իրականացումը, անգամ երկարաժամկետ հեռանկարում, կշարունակվեն համարվել քաղաքականության գերակա ուղղություններ:

Հարկային վարչարարության առաքելությունը պետք է լինի՝

1) հարկ վճարողներին օգնելը. հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունը պետության կողմից հարկ վճարողներին հարկադրած գործողություն է և, հետևաբար, անհրաժեշտ է, որպեսզի հարկ վճարողներն իրենց հարկային պարտավորությունների կատարման համատեքստում նկատեն պետության ուղղակի օժանդակությունը: Այս առումով, վարչարարության նոր համակարգը պետք է բնորոշվի նախ և առաջ հարկային ինքնագնահատման համակարգին հատուկ գծերով, հարկերի հաշվարկման և վճարման առումով նվազագույն նյութական և ժամանակային ծախսումներով: Անհրաժեշտ է հնարավորինս ընդլայնել հարկային մարմինների կողմից հարկատուներին մատուցվող ծառայությունների ցանկը, բարելավել դրանց որակը, բարձրացնել հարկային մարմնի գործունեության հրապարակայնության աստիճանը,

2) հարկային խախտումների կանխարգելումը և հարկումից խուսափողներին խստագույնս պատժելը. հարկային վարչարարության շարունակական կատարելագործումը

և օրինազանց հարկ վճարողների դեմ անողոք պայքարը լինելու է հարկային համակարգի գերակայություններից մեկը: Այս առումով, առանցքային նշանակություն է տրվելու ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի կատարելագործմանն ու լայնամասշտաբ կիրառությանը,

3) ստվերային տնտեսության դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը. հարկային վարչարարության հիմնական մարտահրավերներից մեկն էլ լինելու է տնտեսության ստվերային հատվածի շարունակական կրճատումը: Այս նպատակով արդյունավետ և հասցեական միջոցառումների իրականացումն ու վարչարարական գործիքների կիրառությունը կարևորվում է ոչ միայն պետական բյուջեի լրացուցիչ հարկային եկամուտների հավաքագրման, այլ նաև տնտեսության մեջ գործարարությամբ զբաղվելու հավասար մրցակցային պայմանների ձևավորմանն ու պահպանմանն տեսանկյունից,

4) հարկային կարգապահության ամրապնդումը. հարկային վարչարարության բնագավառի հրատապ խնդիրների շարքում առանձնանում են հարկային ապառքները: Այս առումով, վարչարարության սլաքը ուղղվելու է ոչ միայն նոր ապառքների կուտակումներ թույլ չտալուն, այլ նաև առկա ապառքների նվազեցմանն օրենսդրական մեխանիզմների հետևողական կիրառությանը:

6. Երկարաժամկետ հեռանկարում հարկային համակարգի առավելագույն կայունության ապահովում.

Անհրաժեշտ է հնարավորինս ձեռնպահ մնալ հարկային համակարգում հաճախակի փոփոխությունների կատարումից (հատկապես եթե այդ փոփոխությունների իրականացումից էական բարելավումներ չեն ակնկալվում և դրանք պայմանավորված չեն պետության շահերի պաշտպանության անհետաձգելիությամբ)՝ հաշվի առնելով այն, որ նման փոփոխությունները անհարմարություններ են ստեղծում ոչ միայն հարկ վճարողների, այլ նաև հարկային մարմինների համար:

Միաժամանակ, հարկային օրենսդրության փոփոխությունների կանխատեսելիությունն ապահովելու տեսանկյունից չափազանց կարևոր է այն, որ օրենսդրության ցանկացած փոփոխություն պետք է համահունչ լինի սույն ուղենիշային փաստաթղթի հիմքում դրված ռազմավարական սկզբունքներին և չպետք է որևէ կերպ հակադրվի դրանց:

Մյուս կողմից, հարկային օրենսդրության փոփոխություններին պատրաստվելու, հարկ վճարողների արտադրատնտեսական գործունեությունը նոր ստեղծվող պայմաններին համապատասխանեցնելու հնարավորությունների ձևավորման և ընդհանրապես կանխատեսելի գործարար միջավայր ունենալու տեսանկյունից առանձնակի կարևորվում է այն, որ հարկ վճարողների գործունեության պայմաններն այս կամ այն կերպ փոփոխող և հատկապես հարկ վճարողների համար նոր պարտականություններ սահմանող օրենսդրական փոփոխությունները պետք է ուժի մեջ մտնեն դրանց հրապարակումից որոշակի ժամանակ հետո:

Կարճաժամկետ հեռանկարում միասնական հարկային օրենսգրքի ընդունումը կարևոր ներդրում կլինի հարկային օրենսդրության և հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի համախմբման, դրանցում առկա կրկնությունների, հակասությունների, տարբերակումների վերացման, հարկային համակարգի օրենսդրական հիմքի կայունության ապահովման, ինչպես նաև «հարկային իրավունք» հասկացության ձևավորման ու պահպանության մշակույթի ձևավորման տեսանկյունից:

Միաժամանակ, շատ կարևոր է, որպեսզի հարկային համակարգում օրենսդրական փոփոխություններ կատարելուց առաջ նախապես գնահատվեն այդ փոփոխությունների հնարավոր ազդեցությունները ինչպես պետության, այնպես էլ գործարար միջավայրի ու հասարակության այլ օղակների վրա: Նշվածը կարգավորման ազդեցությունների գնահատման մեխանիզմն է, որը հանդիսանում է երկրի գործարար միջավայրի բարելավման ռազմավարության քաղաքականության միջոցառումներից մեկը և թույլ է տալիս խուսափել լրացուցիչ բեռ առաջացնող կարգավորումներից: Ըստ էության դա նշանակում է, որ հարկային օրենսդրության ցանկացած փոփոխություն պետք է լինի քանակապես չափելի:

Բացի այդ, շատ կարևոր է, որպեսզի պետությունը ժամանակ առ ժամանակ հետա-հայաց վերլուծությամբ անդրադառնա հարկային համակարգում կատարված օրենսդրական փոփոխություններին, ինչը նույնպես հնարավորություն կընձեռի գնահատել դրանց արդյունավետությունը:

7. Հարկային համակարգում փոփոխությունների ընթացքի մշտադիտարկումը և հրապարակայնությունը.

Հարկային համակարգում կատարվող բարեփոխումները (այդ թվում օրենսդրական)՝ դրանց արդյունավետության գնահատման նպատակով, պետք է ուղեկցվեն՝

1) կատարողական ցուցանիշների համակարգի մշակմամբ և ներդրմամբ. վարչարարական համակարգի կատարելագործման ուղղությամբ իրականացվող միջոցառումները պետք է անպայմանորեն գնահատվեն դրանց արդյունավետության տեսանկյունից՝ հիմք ընդունելով գնահատման առարկայական ցուցանիշներ, հակառակ պարագայում հնարավոր չի լինի որոշել նշյալ միջոցառումների իրականացման նպատակահարմարությունը: Հետևաբար, անհրաժեշտ է մշակել կատարողական հստակ ցուցանիշներ (այդ թվում հասարակական հարցման արդյունքներ), որոնց փոփոխության միտումների մշտադիտարկումները թույլ կտան վերահսկել նպատակի իրագործման ընթացքը,

2) կատարողական ցուցանիշների միջոցով ձեռնարկված միջոցառումների արդյունավետության դիտարկմամբ. յուրաքանչյուր հաջորդող տարվա ընթացքում կատարման ենթակա՝ հարկային համակարգին առնչվող միջոցառումների վերաբերյալ առաջարկությունները քննարկելուց առաջ անհրաժեշտ է քննարկման ներկայացնել այն արդյունքները, որոնց հնարավոր է դարձել հասնել նախորդ տարվա միջոցառումների արդյունքում հիմնվելով նախապես հաստատված բնութագրող ցուցանիշների փոփոխության վրա,

3) հարկային ծառայողների գործողությունների կամ անգործության դեմ բողոքարկման արտադատական համակարգի կատարելագործմամբ. այս ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ծանրակշիռ քայլեր է կատարել՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներքո ձևավորելով գանգատարկման միջգերատեսչական խորհուրդ՝ որպես հարկային հարցերով դիմում-գանգատների քննարկման արտադատական համակարգի երկրորդ օղակ: Այս առումով, հարկային հարցերով դիմում-գանգատների քննության արտադատական համակարգի հետագա կատարելագործումը նույնպես գտնվելու է ուշադրության կենտրոնում՝ հաշվի առնելով այն, որ նմանատիպ համակարգերի արդյունավետ գործարկմամբ նաև ամրապնդվում է հարկ վճարողների վստահությունը հարկային համակարգի նկատմամբ:

4) առաջարկվող օրենսդրական փոփոխությունների հրապարակայնության ապահովմամբ, հարկային համակարգի փոփոխություններին վերաբերող նախաձեռնություններն ու օրենսդրական նախագծերը պետք է մատչելի լինեն հասարակությանը, քննարկվեն տարբեր շահագրգիռ կողմերի հետ և նոր միայն որոշումներ կայացվեն՝ հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի տեսակետներն ու դրանց վերաբերյալ հիմնավոր եզրահանգումները:

8. Հարկային համաձայնագրերի շրջանակի ընդլայնում.

Գործարար միջավայրի ու տնտեսական ակտիվության վրա նկատելի դրական ազդեցություն ունեն նաև միջազգային հարկային հարաբերություններ կարգավորող համաձայնագրերի կնքումը և կիրառությունը: Այս առումով, շարունակաբար կարևորվելու է նմանատիպ հարկային համաձայնագրերի կնքումը հատկապես այն երկրների հետ, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը ունի կամ ակնկալում է ձևավորել ակտիվ առևտրատնտեսական կապեր:

Մաքսային օրենսդրության վերանայման հիմնական ուղղվածության սկզբունքները.

Հայաստանի Հանրապետությունում մաքսային հարաբերություններ կարգավորող օրենսդրության վերանայումներն առաջիկա տարիներին հիմնված են լինելու 1999 թվականին ընդունված՝ «Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին» Կիոտոյի վերանայված կոնվենցիայից բխող հետևյալ հիմնական սկզբունքների վրա և միաժամանակ կողմնորոշված են լինելու ՀՀ-ԵՄ Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի կնքման շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարմանը:

1. Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հայտարարագրման գործընթացի պարզեցում.

Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հայտարարագրման գործընթացի պարզեցման հիմնական ուղղություններ են հանդիսանալու՝

ա. հայտարարագրման ժամանակ պահանջվող փաստաթղթերի կրճատումը, ինչը հնարավորություն կընձեռի նկատելիորեն պարզեցնել հայտարարագրման գործընթացը

բ. նախնական հայտարարագրման համակարգի շարունակական պարզեցումը և կատարելագործումը, ինչը հնարավորություն կընձեռի կրճատել հայտարարագրման գործընթացի վրա ծախսվող ժամանակը,

գ. Էլեկտրոնային եղանակով հայտարարագրերի ներկայացման համակարգի պարզեցումը և կիրառության շրջանակի ընդլայնումը, ինչը կարող է կարևոր ներդրում լինել արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների և մաքսային մարմինների շփումների կրճատման խնդրի լուծման գործում:

Ընդհանուր առմամբ, կարևորվում է վերոնշյալ ուղղություններով իրականացվող՝ հայտարարագրման գործընթացի պարզեցումն իրականացնել այնպես, որպեսզի հնարավոր լինի հայտարարագրման գործընթացը (հատկապես բարեխիղճ և ոչ ռիսկային համարվող տնտեսավարող սուբյեկտների պարագայում) իրականացնել հետևյալ փաստաթղթերով ամրագրված և միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող կանոններին համահունչ.

ա. ներմուծվող ապրանքների նախնական հայտարարագրում ([Incomplete Declaration at Import](#)),

բ. արտահանվող ապրանքների նախնական հայտարարագրում ([Incomplete Declaration at Export](#)),

գ. ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպման պարզեցված կարգ ([Simplified Declaration Procedure at Import](#)),

դ. արտահանվող ապրանքների մաքսային ձևակերպման պարզեցված կարգ ([Simplified Declaration Procedure at Export](#)),

ե. ներմուծվող ապրանքների տեղային մաքսազերծման ընթացակարգ ([Local Clearance Procedure at Import](#)),

զ. արտահանվող ապրանքների տեղային մաքսազերծման ընթացակարգ ([Local Clearance Procedure at Export](#)):

2. Մաքսային հսկողության ժամանակակից մեթոդների կիրառում.

Այս սկզբունքը ենթադրում է, որ մաքսային հսկողության համատեքստում կարևորվելու է կառավարման նորագույն տեխնոլոգիաների ներդրումը՝ որպես մաքսային մարմինների ու տնտեսավարող սուբյեկտների, այնպես էլ հայաստանյան մաքսային մարմինների ու այլ պետությունների մաքսային մարմինների միջև համագործակցության արդյունավետությունը բարձրացնող գործիքների համախումբ: Վերջինիս կիրառությունը մի կողմից կնպաստի մաքսային ընթացակարգերի վրա ծախսվող ժամանակի կրճատմանը, մյուս կողմից՝ մաքսանենգության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

3. Ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործում.

Ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործումը կարևոր ներդրում կարող է լինել ինչպես գործարար միջավայրի բարելավման, այնպես էլ մաքսային մարմինների աշխատանքի արդյունավետության աստիճանի բարձրացման տեսանկյունից՝ հաշվի առնելով այն, որ այդ համակարգի կատարելագործումը՝

ա. բարեխիղճ և ոչ ռիսկային տնտեսավարող սուբյեկտներին մաքսային պարզեցված ու արագացված ընթացակարգերից օգտվելու հնարավորություն կընձեռի,

բ. մաքսային մարմնին հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ ձևով օգտագործելու վարչարարական կարողությունները՝ կենտրոնանալով առավել ռիսկային համարվող տնտեսավարող սուբյեկտների ու գարծարքների հսկողության վրա:

4. Հեղբայրացողումային հսկողության համակարգի կադրակազմում.

Մաքսային համակարգի զարգացման համատեքստում կարևորվում է նաև հետբացթողումային հսկողության համակարգի կատարելագործումը՝ հաշվի առնելով այն, որ վերջինս կարող է նպաստել ներմուծման պահին մաքսային սահմանին իրականացվող հսկողությունը նվազագույնի հասցնելուն: Այս իմաստով, հատկանշական է այն, որ որոշ հսկողական գործառույթներ մաքսային սահմանից աստիճանաբար դուրս բերելը և դրանք հետբացթողումային հսկողության շրջանակներում տեղայնացնելը միանգամայն համահունչ է այս ոլորտում միջազգային լավագույն փորձին և կարող է հաջողությամբ իրականացվել նաև մեր երկրում:

5. Մաքսային համակարգին վերաբերող փոփոխությունների հրապարակայնություն, թափանցիկություն և կանխարևելիություն.

Մաքսային համակարգի փոփոխություններին վերաբերող նախաձեռնություններն ու օրենսդրական նախագծերը պետք է մատչելի լինեն հասարակությանը, քննարկվեն տարբեր շահագրգիռ կողմերի հետ և նոր միայն որոշումներ կայացվեն՝ հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի տեսակետներն ու դրանց վերաբերյալ հիմնավոր եզրահանգումները:

Այս սկզբունքի ապահովման մյուս ուղղությունը պետք է լինի մաքսային ընթացակարգերում և մաքսային գործում կանխատեսելի, անկողմնակալ և հստակ գործելակերպի ձևավորումը:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

h/h	Միջոցառումը	Իրականացնող մարմինները		Օրենսդրական նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու ժամկետը	Ֆինանսավորումը
		պատասխանատու մարմինը	համակատարողը		
1.	Անշարժ գույքի միասնական հարկի համակարգի ներդրման նպատակով համապատասխան օրենսդրական նախագծերի մշակում ու ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2013 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
2.	Ֆիզիկական անձանց կողմից առանձին ապրանքների և միջազգային փոստային առաքումների միջոցով տեղափոխվող ապրանքների տեղափոխման գործընթացի	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական	2013 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

	պարզեցում		Եկամուտների կոմիտե		
3.	<p>Տնտեսության ֆինանսական հատվածում գործող կազմակերպությունների կողմից մատուցվող հետևյալ ծառայությունների դիմաց ստացվող ոչ տոկոսային եկամուտների՝ ԱԱՀ-ից ազատման արտոնության վերացում.</p> <ul style="list-style-type: none"> • պահատուիների տրամադրման ծառայությունների մատուցում, • ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայությունների մատուցում, • բրոքերային և միջնորդական ծառայությունների մատուցում: 	ՀՀ ֆինանսների նախարարություն	<p>ՀՀ կենտրոնական բանկ</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե</p>	2013 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
4.	<p>Տնտեսության ֆինանսական հատվածում գործող կազմակերպությունների կողմից մատուցվող այլ ծառայությունների դիմաց ստացվող ոչ տոկոսային եկամուտների՝ ԱԱՀ-ից ազատման արտոնության վերացման հնարավորությունների ուսումնասիրություն՝ համադրելով նաև ինդրո առարկա հարցի վերաբերյալ Արժույթի Միջազգային Հիմնադրամի, Համաշխարհային Բանկի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեսակետները:</p>	ՀՀ ֆինանսների նախարարություն	<p>ՀՀ կենտրոնական բանկ</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե</p>	2013 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
5.	<p>Ֆիզիկական անձանց և ռեզիդենտ կազմակերպությունների կողմից ստացվող շահաբաժինների՝ շահութահարկից և եկամտային հարկից ազատման արտոնության</p>	ՀՀ ֆինանսների նախարարություն	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական</p>	2013 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

	վերացում		եկամուտների կոմիտե		
6.	Սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների շրջանակի կրճատման հնարավորությունների ուսումնասիրություն, ազդեցության գնահատում և համապատասխան առաջարկությունների ներկայացում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2013 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
7.	Գանձապետական պարտատոմսերից ֆիզիկական անձանց կողմից ստացվող տոկոսի կամ զեղչի՝ եկամտային հարկից ազատման արտոնության վերացում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2014 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
8.	Դիզելային վառելիքի ներմուծման և օտարման գծով ԱԱՀ-ից ազատման արտոնության վերացման հնարավորությունների ուսումնասիրություն, ազդեցության գնահատում և համապատասխան առաջարկությունների ներկայացում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2014 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
9.	Ծխախոտի արտադրանքի և ալկոհոլային խմիչքների մասով ակցիզային հարկի դրույքաչափերի ուսումնասիրություն և համապատասխան առաջարկությունների ներկայացում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2014 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
10.	Գույքահարկի և հողի հարկի հարկման բազաների վերանայում գույքային միավորների և հողերի կադաստրային արժեքները հնարավորին չափ	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային	2014 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

	մոտեցնելով դրանց վաճառքի շուկայական գներին		կառավարման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե		
11.	ԱԱՀ-ի հաշվարկներով առաջացող դեբետային մնացորդները հաջորդ հաշվետու ժամանակաշրջաններ տեղափոխելու առավել ազատական համակարգի ներդրում, ինչը հարկ վճարողներին հնարավորություն կընձեռի՝ օրենսդրական փոփոխությունը կատարելուն հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններում առաջացող դեբետային մնացորդները ուղղել այլ հարկային պարտավորությունների մարմանը կամ հետ ստանալ, եթե հարկ վճարողը մի քանի ժամանակաշրջան շարունակ ներկայացնում է դեբետային մնացորդով ԱԱՀ-ի հաշվարկ	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2014 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պահանջվում է արտաքին ֆինանսավորում
12.	ԱԱՀ-ի գծով հաշվանցումները (հաշվարկված պարտավորություններից նվազեցումները) հաշվառման հաշվեգրման սկզբունքով կատարելու համակարգի ներդրում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2014 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պահանջվում է արտաքին ֆինանսավորում
13.	ՀՀ ներմուծվող ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի գանձումը մաքսային սահմա-	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն	2014 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պահանջվում է արտաքին ֆինանսավորում

	<p>նից փուլ առ փուլ (սկզբնական շրջանում նախապատվությունը տալով ներդրումային բնույթի ապրանքախմբերին) դեպի հանրապետության ներքին տարածք տեղափոխելու հնարավորությունների ու նպատակահարմարության ուսումնասիրություն, արդյունքների գնահատում և այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումների ժամանակացույցի մշակում</p>		<p>առընթեր պետական եկամուտների կոմիտե</p>		
14.	<p>Գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների՝ շահութահարկից և եկամտային հարկից ազատման արտոնության շրջանակի կրճատման հնարավորությունների ուսումնասիրություն, ազդեցության գնահատում և համապատասխան առաջարկությունների ներկայացում</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե</p>	<p>2014 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

